ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-18/10 - 90-18

ք. Երևան «13» 06 2018 թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Մխիթարյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման** պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, N 4 և N 5 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 4, N 5 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1, N 4 և N 5 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1, N 4 և N 5 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1, N 4 և N 5 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1, N4 և N5 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1, N 4, N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5 Հ/հ՝ 900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ՝ 02505983 _____ **Ա. Կարապետյան**	**«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ** Հասցե՝ Երևան, Վրացական 4-րդ նրբ. շ. 7բն. 10 հեռախոս 230108 Հ/հ 220000129423-000 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀՎՀՀ 00031518 _____ **Ա. Մխիթարյան**

Հավելված N 1
«13» 06 2018 թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԾՁԲ-18/10-90-18 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						Հասցեն	Ժամկետը**
1	72211125/1	Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ ամբողջական տեխնիկական բնութագիրը ներառված է հավելված 4-ի և հավելված 5-ի մեջ	դրամ	3000000	1	Կառավարական 3-րդ շենք	IV եռամսյակ

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա. Կարապետյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
Հասցե՝ Երևան, Վրացական 4-րդ նրբ. շ. 7բն. 10
հեռախոս 230108
Հ/հ 220000129423-000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00031518

Ա. Մխիթարյան

Հավելված N 2
«13» 06 2018թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԾՁԲ-18/10-90/8 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տնտեսագիտական դասակարգում	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին ատաբյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում**										
1	72511100/2	Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	**4232**	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
				1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			
				-			-			-			3000000			3000000
			Ընդամենը՝	-			-			-			3000000			3000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա. Կարապետյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
Հասցե՝ Երևան, Վրացական 4-րդ նրբ. շ. 7բն. 10
հեռախոս 230108
Հ/հ 220000129423-000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00031518

Ա. Մխիթարյան

Հավելված 3
« 13 » 06 2018 թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԾՁԲ-18/10-90-18 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 13 » 06 2018 թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՅՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2018 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ տեխնիկական առաջադրանքը հանդիսանում է մտավոր սեփականության գործակալության ինտերնետային կայքում էլեկտրոնային եղանակով ապրանքային նշանների գրանցման ժամկետի երկարաձգման հնարավորության ստեղծման հանձնարարական:

Կատարվելիք աշխատանքների տեխնիկական բնութագիրը

1. Մշակվող համակարգը պետք է ապրանքային նշանի իրավատիրոջը հնարավորություն ընձեռի ապրանքային նշանների գրանցման ժամկետը էլեկտրոնային եղանակով երկարաձգելու, այն է՝ երկարաձգման դիմումը լրացնելու և այլ անհրաժեշտ փաստաթղթեր կցելու և online ռեժիմով ներկայացնելու գործակալություն: Դիմումի ձևը տրվում է հավելվածում:
2. Գործակալության ինտերնետայիան կայքի «Ձևաթղթեր» բաժնում (Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու մասին դիմումի մոտ) ստեղծել հնարավորությաուն գրանցման համարով որոնելու երկարաձգման ենթակա ապրանքայան նշանը:
3. Որոնումից հետո բացվում է երկարաձգման դիմումի ձևը, որտեղ բազայից արդեն լրացված են գրանցման համարը, գրանցման թվականը, իրավատիրոջ վերաբերյալ տվյալները: Մնացած տվյալները լրացնում է իրավատերը:
4. Ստեղծել նաև տուրքի անդորագիրը կցելու հնարավորություն, որից հետո դիմումը ստորագրվում է էլեկտրոնային ստորագրությամբ և ուղղարկվում է գրանցամատյանների բաժին:
5. Մշակման ընթացքում հնարավոր են որոշ փոփոխություններ:

Փոփոխություններ

1. Էլեկտրոնային հայտերի համակարգում ստեղծել հայտի փոփոխության հնարավորություն (դիմումի ձևը կցվում է):
2. Ստեղծել որոշումները բազայում էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելու հնարավորություն:
3. Հավատարամատարների բազայում ավելացնել վկայագիր տպելու և տուրքի մուտքագրման հնարավորություն:
4. Ապրանքային նշանների միջազգային գրանցումների բազայի «Basic Registration» բաժնում ավելացնել «Decisions» ենթաբաժինը:
5. Ապրանքային նշանների, գյուտերի և արդյունաբերական նմուշների, հանրահայտ ապրանքայիան նշանների բազայի մատենագիտական տվյալներում (գրանցամատյան բաժնում) ավելացնել սնանկության թվականը դաշտը: Նախընտրելի տարբերակ՝ ծանուցման տողի տակ:
6. Ապրանքային նշանների բազայում ավտոմատ դադարեցեման ժամկետը կրճատել 15 օր:
7. Ապրանքային նշանների բազայում գրանցամատյանների բաժնում ստեղծել ընդլայնված քաղվածք տպելու հնարավորություն:
8. Հայտատուի տվյալները (որոնց կցված չէ որևէ ապրանքայիան նշան) ջնջելու հնարավորություն ստեղծել:
9. Տուրքերի բազայում տուրքը կրկնվելու դեպքում ցույց տա սկզբնաղբյուրը (հայտի համարը):
10. Հանրահայտ ապրանքային նշանների բազայում ստեղծել պատկեր ներմուծելու հնարավորություն, որը պետք է լինի նաև վկայագրի վրա և վկայագիրը համապատասխանեցնել ապրանքային նշանի վկայագրին:
11. Հանրահայտ ապրանքային նշանների բազայում տեղեկագրի համար ստեղծել XML դուրս բերում ((**111**), (**151**), (**152**), (**730**), (**740**), (**511**), (**540**)) :
12. Հանրահայտ ապրանքայիան նշանների բազայում գրանցման համարը դրվի ավտոմատ :
13. Հանրահայտ ապրանքային նշանների բազայում «Իրավատիրոջ» դաշտի տվյալները չեն պահպանվում:

14. Բոլոր համակարգերում ստեղծել լոգավորման համակարգ, որտեղ կգրանցվի օգտագործողների կողմից կատարված բոլոր գործողությունները:
15. Պայմանագրերի բազայում իրավատիրոջ անվանումով որոնման ժամանակ մի քանի տառ գրելուց առաջարիկի տարբերակներ:
16. Պայմանագրերի բազայում ստեղծել հնարավորություն մի քանի իրավատեր կամ ստացող մուտքագրելու հանարավորություն
17. Պայմանագրերի բազայի մատենագիտական տվյալներում ավելացնել «Մերժման թվական» դաշտը:
18. Պայմանագրերի բազայում ստեղծել հանրավորություն պայմանագրերը թերթելու:
19. Պայմանագրերի բազայում զեղչով տուրքերի ցանկը դուրս բերելու հնարավորություն ստեղծել:
20. Գյուտերի բազայում «CIS XML» դուրս բերման ժամանակ Sub և Sup բառերը հասկանում է որպես մեծի և փոքրի նշան:
21. Գյուտերի և արդյունաբերական նմուշների բազայում ավելացնել ներկայացուցիչ դաշտը:
22. Գյուտերի բազայում «Գործողության դադարեցման պատճառ» դաշտի տվյալները չի երևում:
23. Գույքագրման բազայում ստեղծել դուրս գրված գույքը արխիվ ուղղարկելու հնարավորություն (ինչպես ապրանքային նշանների բազայում է), և ստեղծել արխիվը ընթացիկից առանձին որոնելու հնարավորություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա. Կարապետյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
Հասցե՝ Երևան, Վրացական 4-րդ նրբ. շ. 7բն. 10
հեռախոս 230108
Հ/հ 220000129423-000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00031518

Ա. Մխիթարյան

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման
և ներդրումների նախարարության աշխատակազմի
Մտավոր սեփականության գործակալություն
(Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3)

ԴԻՄՈՒՄ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ երկարաձգել սույն դիմումում նշված ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը:

1. Խնդրարկվող գրանցման գործողության ժամկետի երկարաձգումը

1.1. գրանցման համարը

1.2. գրանցման թվականը

2. Իրավատեր

2.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

2.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

2.3. ☐ իրավատերերը մի քանիսն են (իրավատերերի մասին տվյալները՝ ըստ 2.1-ին և 2.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

3. Իրավատիրոջ լիազորած անձ

3.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

4. Նամակագրության հասցեն

5. Ապրանքները և (կամ) ծառայությունները՝

5.1. ☐ երկարաձգումը խնդրարկվում է վկայագրում նշված ԱԾՄԴ-ի բոլոր դասերի ապրանքների և (կամ) ծառայությունների համար

5.2. ☐ երկարաձգումը խնդրարկվում է վկայագրում նշված ԱԾՄԴ-ի հետևյալ դասերի ապրանքների և (կամ) ծառայությունների համար՝

5.3. ☐ երկարաձգումը խնդրարկվում է վկայագրում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար՝ բացառությամբ՝*

6. Ստորագրություն

6.1. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը՝

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

6.2. Նշվում են համապատասխան վանդակները՝ կախված այն բանից, թե ում կողմից է դիմումն ստորագրվել

6.2.1. ☐ իրավատեր

6.2.2. ☐ իրավատիրոջ լիազորած անձ

6.3. ստորագրություն _____ _____

թվական

7. Տուրքեր

7.1. վճարված է դրամ պետական տուրք ☐ անդորրագիրը կցվում է

վճարման ձևը

8. ☐ Կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը

*- Շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

Դ Ի Մ Ո Ւ Մ ապրանքային նշանի հայտում փոփոխություններ կատարելու մասին	Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալություն Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3
1. Խնդրարկվում է ստորև նշված հայտում կատարել սույն դիմումում նշված փոփոխությունները	(լրացնում է գործակալությունը)

2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ հայտին (հայտերին)

2.1. հայտի համարը (հայտերի համարները)

2.2. ☐ հայտերի համարները տրված են առանձին թերթի վրա

3. Հայտատու (հայտատուներ)

3.1. իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը

3.2. հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը)

հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն

3.3. ☐ մեկից ավելի հայտատուներ (հայտատուների մասին տվյալներն ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի տրվում են առանձին թերթի վրա)

4. Հայտատուի ներկայացուցիչը՝

4.1. Ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը

5. Նամակագրության հասցեն՝ (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)

6. Փոփոխությունը (ները)	
6.1. տվյալները, որոնք պետք է փոփոխվեն՝	6.2 փոփոխված տեսքով տվյալները
☐ փոփոխության հիմքը կցվում է	
☐ 6.1-ին և 6.2-րդ կետերում նշված տվյալների շարունակությունը տրվում է առանձին թերթի վրա	

7. Ստորագրությունը _____

7.1. _____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

7.2. թվականը _____ 20 թ.

7.3. ստորագրողը ☐ հայտատուն է ☐ հայտատուի ներկայացուցիչն է

8. ☐ Վճարված է _____ դրամ պետական տուրք՝

☐ անդորրագիրը կցվում է

8.1. վճարման ձևը _____

9. ☐ Դիմումին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր ☐ այլ փաստաթղթեր

_____

(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի քանակը)

_____

Հավելված 5

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ» ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2018 թ.

Տվյալ տեխնիկական առաջադրանքը հանդիսանում է վեբ-տեխնոլոգիաների (կլիենտների մուլտիպլատֆորմային աշխատանքը ապահովելու համար) հիման վրա արդյունաբերական նմուշների միջազգային գրանցումների տվյալների բազայի համակարգի ստեղծման հանձնարարական: Ստեղծվող համակարգի գույքային իրավունքները պատկանում են Մտավոր սեփականության գործակալությանը: Ստեղծման և շահագործման ընթացքում հնարավոր են կատարվել ոչ մեծ փոփոխություններ:

ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԸ

Մշակվող ենթահամակարգը պետք է ապահովի հետևյալ հնարավորությունները՝

1. Ենթահամակարգը պետք է աշխատի Apache վեբ սերվերի, CentOS կամ FreeBSD օպերացիոն համակարգի հիման վրա:
2. Ենթահամակարգի տվյալների պահպանումը պետք է կատարվի SQL սերվերում, որը ապահովում է տրանզակցիաներ:
3. Ինչպես ծրագրային կոդը, այնպես էլ տվյալների բազաների սերվերը պետք է լինեն բաց կոդով (open source) հետագա ֆինանսական ծախսերը նվազեցնելու և փոփոխություններին արագ արձագանքելու նպատակով
4. Մշակվող ենթահամակարգը պետք է ունենա գրաֆիկական ինտերֆեյս, որը գործածելի պետք է լինի համակարգի մշակման պահին գոյություն ունեցող արդիական վեբ զննիչների (browser) միջոցով (Chrome, Mozilla Firefox, Safari, Opera, Internet Explorer) առանց այլ ծրագրային փաթեթների (օրինակ Java) տեղադրման պայմանով:
5. Ենթահամակարգը պետք է ունենա իր ներսում պարբերաբար ավտոմատ արխիվացիայի և վերականգնման հնարավորություն:
6. Ենթահամակարգի կողմից պատրաստվող բոլոր հաշվետվություններն ու որոշումները պետք է հնարավորություն ունենան կազմվել ինչպես HTML, XML այնպես էլ MS DOC կամ MS XLS և Adobe PDF ֆորմատներով, որոնց ստեղծման ընթացքում անհրաժեշտ է խորհրդակցել գործակալության անձնակազմի հետ:
7. Ենթահամակարգը պետք է ունենա բազայի ադմինիստրատորի կողմից որոշումների տեքստային և դաշտերի դուրս բերման, ավելացման և

նվազեցման փոփոխության հնարավորություն: Օգտագործողները պիտի ունենան որոշումների փոփոխվող դաշտերի խմբագրման հնարավորություն, ընդունված որոշումները տեսնել էկրանի վրա, ինչպես նաեւ տպել: Ադմինիստրատորը պետք է ունենա նաև տուրքերի դրույքաչափերի, տեքստային մասի փոփոխության հնարավորություն, ինչպես նաև նոր տուրքի դրույքաչափ ավելացնելու կամ ջնջելու հնարավորություն:

8. Ենթահամակարգը շահագործումից հետո պետք է ունենա երաշխիքային սպասարկում մեկ տարի ժամկետով:
9. Ենթահամակարգում պետք է լինի տարբեր իրավունքներով օգտագործողների խմբեր՝
    1. փորձագետ,
    2. հյուր,
    3. ղեկավար,
    4. ադմինիստրատոր,

ադմինիստրատորի կողմից իրավունքների հետագա վերահսկման հնարավորություն (իրավունքների ավելացման կամ նվազեցման), ինչպես նաև նոր օգտագործողներ ավելացնելու և նախկին օգտագործողների գործող իրավունքների արգելափակման իրավունք:

1.Աշխատանքի ընդհանուր նկարագրություն

ftp://ftpird.wipo.int/wipo/hague/ կայքում տեղադրված XML ֆորմատի ֆայլից արդյունաբերական նմուշների միջազգային գրանցուների բազան համալրվում է միջազգային բյուրոյի կողմից պարբերաբար ծանուցվող գրանցուներով:
Միջազգային բյուրոյից ստացված միջազգային գրանցման մասին ցանկացած ծանուցման նկատմամբ, որում նշված է Հայաստանի Հանրապետությունը կիրառվում են դիտողության և առարկության ներկայացման և հայտի ըստ էության փորձաքննության անցկացման գործընթացները, այն նույն պայմաններով, որոնք օրենքով նախատեսված են անմիջականորեն պետական լիազոր մարմին ներկայացված հայտերի համար:
Փորձաքննության արդյունքում միջազգային գրանցման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց հետո պետական լիազոր մարմինը Միջազգային բյուրոյին ծանուցում է՝

1) արդյունաբերական նմուշի պահպանության տրամադրումը մերժելու մասին կամ

2) արդյունաբերական նմուշին պահպանություն տրամադրելու մասի:

2. Ենթահամակարգի աշխատանքը

Համակարգը կազմված է 7 բաժիններից՝

1. Մատենագիտական տվյալներ
2. Գործավարություն
3. Որոնում
4. Տուրքեր
5. Վիճակագրություն
6. Օգտագործող

2.1 Մատենագիտական տվյալներ

1. Անհրաժեշտ է ftp://ftpird.wipo.int/wipo/hague/ կայքում տեղադրված XML ֆորմատի ֆայլից միջազգային արդյունաբերական նմուշների ենթահամակարգը համալրել հետևյալ տվյալներով՝

Դաշտի անվանում (XML)	Վերնագիր	Տիպ
<H0110>	(11) Number of the international registration	text
<H0151>	(15) Date of the registration	date
<H0220>	(22) Date of filing of application	date
<BULLNO>	Bulletin No.	text
<H0451>	Notification date	date
<H0730>	(73) Name(s) and adress(es) of the owner(s)	text
<H0720>	(72) Name(s) of the creator(s) if known to be such	text
<H0740>	(74) Name(s) and address(es) of the representative(s)	text

<H0280>	(28) Number of industrial designs included in the application	number
<H0510>	(51) International Classification for Industrial Designs	text
<H0540>	(54) Title of the industrial design	text
<H0570>	(57) Description of characteristic features	text
<H0811>	(81) Contracted Parties	text
<H0860>	(86) Habitual residence of the owner(s)	text
<H0870>	(87) Nationality of the owner(s)	text

Ենթահամակարգը պետք է համալրել միայն NEN ORIGLANG դաշտերով, որոնց համար <H0811> = AM:

<H0730>, <H0740>, <H0720> դաշտերը կարող են լինել մի քանի հատ:

Ենթահամակարգում պետք է նախատեսել նաև հետևյալ դաշտերը՝

Head	Head	text
Expert	Expert	text
Attorney	Attorney	text

Attorney դաշտը համալրվում է հավատարմատարների բազայից:

2.2 Գործավարություն

Գործավարություն ենթաբաժնում պետք է նախատեսել անհրաժեշտ միջազգային գրանցման համարն ընտրելու հնարավորություն, որից հետո պետք է երևա տվյալ գրանցման մատենագիտական տվյալները:

Համապատասխան միջազգային գրանցման համար կայացվում են հետևյալ որոշումներից որևէ մեկը կամ մի քանիսը՝

- Grant of Protection
- Refusal
- Withdrawn

Grant of Protection որոշման համար անհրաժեշտ են հետևյալ դաշտերը՝

Դաշտի անվանում	**Տիպ**
Decision No AM/GP	number
Protection is granted for all the industrial designs	check
Protection is granted for the following industrial designs	check
Date on which the international registration produced or shall produce the effect as a grant of protection under the applicable law	date
Date of the statement	date

«Decision No AM/GP» դաշտը գրանցման հերթական համարն է, որը ստացվում է double click-ով (առաջին չորս թվանշանները նշում են տարեթիվը, մնացած չորսը՝ տվյալ տարվա հերթական համարը, սկսելով 0001-ից):

Անհրաժեշտ է համապատասխան որոշում կայացնելուց հետո, որոշման ձևը (ձևերը կցվում են) նախապես դիտել և որպես PDF ֆայլ պահպանել համակարգչում (PDF ֆայլի անունը պետք է կազմված լինի միգազգային գրանցման համարից (Number of international registration), _ նշանից և GP տառերից):

Refusal որոշման համար անհրաժեշտ են հետևյալ դաշտերը ՝

Դաշտի անվանում	**Տիպ**
Decision No AM/RF	number
Refusal for all the industrial designs	Check
Refusal for the following industrial designs	Check
Grounds for refusal	text
Corresponding essential provisions of the applicable law	text
Date on which the refusal was pronounced	date

«Decision No AM/RF» դաշտը գրանցման հերթական համարն է, որը ստացվում է double click-ով (առաջին չորս թվանշանները նշում են տարեթիվը, մնացած երեքը՝ տվյալ տարվա հերթական համարը, սկսելով 001-ից):

Անհրաժեշտ է համապատասխան որոշում կայացնելուց հետո, որոշման ձևը (ձևը կցվում է) նախապես դիտել և որպես PDF ֆայլ պահպանել համակարգչում (PDF ֆայլի անունը պետք է կազմված լինի միգազգային գրանցման համարից (Number of international registration), _ նշանից և RF տառերից:

Withdrawals ենթաբաժնի դաշտերն են՝

Դաշտի անվանում	**Տիպ**
Decision No AM/CR	number
Authority pronouncing the declaration (Name of court):	text
Provisions of the law applicable on the subject	text
Withdrawn for all the industrial designs	
Withdrawn for the following industrial designs	text
Date of which the declaration was notified	text

«Decision No AM/CR» դաշտը գրանցման հերթական համարն , որոնք ստացվում են double click-ով (առաջին չորս թվանշանները նշում են տարեթիվը, մնացած երեքը՝ տվյալ տարվա հերթական համարը, սկսելով 001-ից):

Անհրաժեշտ է համապատասխան որոշում կայացնելուց հետո, որոշման ձևը (ձևը կցվում է) նախապես դիտել և որպես PDF ֆայլ պահպանել համակարգչում (PDF ֆայլի անունը պետք է կազմված լինի միգազգային գրանցման համարից (Number of international registration), _ նշանից և CR տառերից:

4. Որոնման համակարգ

Որոնման համակարգում պետք է նախատեսել հետևյալ դաշտերով որոնման հնարավորություն՝

(11) Number of international registration
(73) Owner
(54) Title of the industrial design
Notification date
Bulletin No.

Թվական պարունակող որոնման դաշտերում որոնումները պետք է հնարավոր լինի կատարել ժամանակի ցանկացած կտրվածքով (=, >, <, >=, <=), օր.՝

>= 01.01.2010 <=05.04.2010

5. Տուրքեր

Տուրքեր բաժնի դաշտերն են

Դաշտի անվանում	Տիպ
Fees	Yes/No
Number of international registration	text
Date of fees	date
Sizes of fees	number
BasicRegFees	Yes/No
Application date	date
Country	text

Նախատեսել տուրքերի վիճակագրություն՝ ըստ ժամանակահատվածի տուրքերի գումարը:

6. Վիճակագրություն

Անհրաժեշտ է նշված ժամանակահատվածում նախատեսել հետևյալ վիճակագրական տվյալները տպելու հնարավորություն՝

1. Նախնական մերժումների (Provisional Refuses) քանակը ըստ փորձագետի
2. Վերջնական որոշումների (Final Decisions) քանակը ըստ փորձագետի
3. Գրանցման որոշումների (Grant of Protection) քանակը ըստ փորձագետի
4. Որոշումների քանակը ըստ փորձագետի
5. Հայտերի քանակը ըստ ծագման երկրների

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

---------- **Ա. Կարապետյան**

ԿԱՏԱՐՈՂ
«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
Հասցե՝ Երևան, Վրացական 4-րդ նրբ. շ. 7բն. 10
հեռախոս 230108
Հ/հ 220000129423-000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00031518

---------- **Ա. Մխիթարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

INTELLECTUAL PROPERTY
AGENCY

AM/RF **Decision No**

HAGUE AGREEMENT CONCERNING THE INTERNATIONAL REGISTRATION OF INDUSTRIAL DESIGNS

– NOTIFICATION OF REFUSAL –

Rule 18(2) of the Common Regulations

I. Office sending the notification: **Intellectual Property Agency, Government House 3, Central Avenue, Yerevan, 0010, Republic of Armenia, Phone: (374 11) 597 533, (374 11) 543 467, www.aipa.am**

II. Number of the international registration:

III. ☐ Refusal for all the industrial designs

☐ Refusal for the following industrial designs:

IV. Grounds for refusal:

V. Corresponding essential provisions of the applicable law:

VI. Information relating to subsequent procedures:

(i) Time limit for requesting review or appeal: **within three months from the day of receipt of the notification**

(ii) Authority to which such request for review or appeal should be made: **Trademarks and Industrial Designs Department**

(iii) Indications concerning the appointment of a representative:

VIII. Date on which the refusal was pronounced:

IX. Signature or official seal of the Office making the notification:

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (011) 597-537, Ֆաքս՝ (010) 543-467

Government House 3, Central Avenue, Yerevan 0010, Armenia
Phone: (+374 11) 597-537 Fax: (+374 10) 543-467

Internet: www.aipa.am E-mail: armpat@aipa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

INTELLECTUAL PROPERTY
AGENCY

AM/CR **Decision No**

HAGUE AGREEMENT CONCERNING THE INTERNATIONAL REGISTRATION OF INDUSTRIAL DESIGNS

DECLARATION THAT THE DECISION OF THE REFUSAL OF INTERNATIONAL REGISTRATION HAS BEEN WITHDRAWN

notified to the International Bureau of the World Intellectual Property Organization (WIPO) in accordance with Article 15(2) Hague Agreement

1. Authority pronouncing the declaration (Name of court):

2. Number of the international registration, which is subject of the final decision:

3. Name and address of the holder of the onternational registration, which is subject of the final decision:

4. Provisions of the law applicable on the subject

5. ☐ Withdrawn for all the industrial designs

   ☐ Withdrawn for the following industrial designs:

6. Date of which the declaration was notified:

7. Signature or official seal of the Office making the notification:

8. Office sending the notification: Intellectual Property Agency, Government House 3, Central Avenue, Yerevan, 0010, Republic of Armenia, Phone: (374 11) 597 533, (374 11) 543 467, www.aipa.am

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (011) 597-537, Ֆաքս՝ (010) 543-467

Government House 3, Central Avenue, Yerevan 0010, Armenia
Phone: (+374 11) 597-537 Fax: (+374 10) 543-467

Internet: www.aipa.am E-mail: armpat@aipa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

INTELLECTUAL PROPERTY
AGENCY

AM/GP **Decision No**

HAGUE AGREEMENT CONCERNING THE INTERNATIONAL REGISTRATION OF INDUSTRIAL DESIGNS

– STATEMENT OF GRANT OF PROTECTION –

Rule 18*bis* (1) of the Common Regulations

I. Office sending the statement: **Intellectual Property Agency, Government House 3, Central Avenue, Yerevan, 0010, Republic of Armenia, Phone: 374 11 597 533, 374 11 543 467, www.aipa.am**

II. Number of the international registration:

III. ☐ Protection is granted for all the industrial designs

☐ Protection is granted for the following industrial designs:

IV. Date on which the international registration produced or shall produce the effect as a grant of protection under the applicable law:

V. Date of the statement:

VI. Signature or official seal of the Office sending the statement:

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (011) 597-537, Ֆաքս՝ (010) 543-467

Government House 3, Central Avenue, Yerevan 0010, Armenia
Phone: (+374 11) 597-537 Fax: (+374 10) 543-467

Internet: www.aipa.am E-mail: armpat@aipa.am